ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ
ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

«05» Օգոստոս 2026 թ. N 94-Լ

Հ Ր Ա Մ Ա Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 10-Ի N 27-Լ ՀՐԱՄԱՆՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2026 թվականի հուլիսի 30-ի N 1121-Լ որոշումը.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2026 թվականի փետրվարի 10-ի «Ղարաբաղից տեղահանված անձանց դրամաշնորհի տրամադրման պայմանագրի, այդ անձանց համար բիզնեսի ուսուցման և ուղեկցման ծառայությունների մատուցման հրապարակային օֆերտայի պայմանագրի օրինակելի ձևերը հաստատելու մասին» N 27-Լ հրամանում (այսուհետ՝ հրաման) կատարել հետևյալ լրացումները և փոփոխությունները.

1) հրամանի N 1 հավելվածի՝

ա. 2-րդ կետում «(այսուհետ՝ կազմակերպություն)» բառերից հետո լրացնել «և Կողմ 1-ի» բառերը, իսկ «եզրակացություն» բառը փոխարինել «եզրակացություններ» բառով,

բ. 3-րդ կետի 4-րդ ենթակետից հետո լրացնել նոր՝ 4.1-ին, 4.2-րդ և 4.3.-րդ ենթակետեր հետևյալ բովանդակությամբ.

«4.1. կասեցնել ծրագրով նախատեսված աջակցության տրամադրումը՝ Ծրագրի 20.3-րդ կետով նախատեսված դեպքերում.

4.2. դադարեցնել ծրագրով նախատեսված աջակցությունը՝ Ծրագրի 20.2-րդ կետով նախատեսված դեպքերում.

4.3. առնվազն ամիսը մեկ անգամ իրականացնել ծրագրի կատարման ընթացքի մոնիթորինգ և արդյունքների վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացնել Միասնական սոցիալական ծառայություն մինչև հաջորդող ամսվա տասներորդ աշխատանքային օրը.»,

գ. 4-րդ կետի 3-րդ ենթակետից հետո լրացնել նոր՝ 3.1-ին ենթակետ հետևյալ բովանդակությամբ.

«3.1. Կողմ 2-ից պահանջել գործարար ծրագրի գումարի 30%-ի չափով ներդրումը հիմնավորող փաստաթղթերը (բանկային հաշվի քաղվածքներ, գումարի փոխանցման վերաբերյալ բանկային փաստաթղթեր, վճարման հանձնարարականներ, հսկիչ-դրամարկղային մեքենայի կտրոններ, հաշիվ-ապրանքագրեր, վճարման անդորրագրեր, գնումների պայմանագրեր, սեփականության իրավունքը հաստատող, ինչպես նաև ներդրվող գույքի արժեքը հավաստող փաստաթղթեր).»,

դ. 4-րդ կետի 4-րդ ենթակետից և 5-րդ կետի 3-րդ ենթակետից հանել «կազմակերպության կողմից դրական եզրակացություն ստացած» բառերը,

ե. 5-րդ կետի 2-րդ ենթակետից հետո լրացնել նոր՝ 2.1-ին ենթակետ հետևյալ բովանդակությամբ.

«2.1. Կողմ 1-ին ներկայացնել գործարար ծրագրի գումարի 30%-ի չափով ներդրումը հիմնավորող փաստաթղթերը (բանկային հաշվի քաղվածքներ, գումարի փոխանցման վերաբերյալ բանկային փաստաթղթեր, վճարման հանձնարարականներ, հսկիչ-դրամարկղային մեքենայի կտրոններ, հաշիվ-ապրանքագրեր, վճարման անդորրագրեր, գնումների պայմանագրեր,

սեփականության իրավունքը հաստատող, ինչպես նաև ներդրվող գույքի արժեքը հավաստող փաստաթղթեր).»,

գ. 5-րդ կետի 4-րդ ենթակետից հետո լրացնել նոր՝ 4.1-ին ենթակետ հետևյալ բովանդակությամբ.

«4.1. հետ վերադարձնել ստացված ֆինանսական միջոցները «Զբաղվածության մասին» օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերով սահմանված կարգով, եթե չի պահպանել գործարար ծրագրում նշված ծախսային ուղղությունների, չափերի, համամասնությունների և ձեռք բերվող հիմնական միջոցների վերաբերյալ քանակական և որակական պահանջները:»,

է. 7-րդ կետը լրացնել նոր նախադասություններով հետևյալ բովանդակությամբ.

«7. Ընդ որում, դրամաշնորհը տրվում է գործարար ծրագրով նախատեսված գումարի 30%-ի չափով Կողմ 2-ի կողմից ներդրում կատարելուց հետո: Կողմ 2-ի կողմից ներդրումները կարող են լինել դրամական կամ գույքային (հիմնական միջոցներ, տարածքի տրամադրում):»,

ը. 8-րդ կետում «ձեռնարկատիրական գործունեության մեկնարկից» բառերը փոխարինել «Կողմ 2-ի կողմից գործարար ծրագրի գումարի 30%-ի չափով ներդրումը հիմնավորող փաստաթղթերը (բանկային հաշվի քաղվածքներ, գումարի փոխանցման վերաբերյալ բանկային փաստաթղթեր, վճարման հանձնարարականներ, հսկիչ-դրամարկղային մեքենայի կտրոններ, հաշիվ-ապրանքագրեր, վճարման անդորրագրեր, գնումների պայմանագրեր, սեփականության իրավունքը հաստատող, ինչպես նաև ներդրվող գույքի արժեքը հավաստող փաստաթղթեր) ներկայացնելուց» բառերով:

2) հրամանի N 2 հավելվածի՝

ա. 2.2-րդ կետի 2-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2) բիզնես ուսուցման դասընթացների կազմակերպում 1-3 ամիս ժամկետով՝ առնվազն շաբաթական 2 օր, օրական 2 ժամ տևողությամբ, յուրաքանչյուր խմբում

5-10 մասնակցի ընդգրկմամբ, որի արդյունքում մշակվում են գործարար ծրագրեր,»,

բ. 3.1-ին կետի 2-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2) վերջին տասը տարվա ընթացքում ունենալ բիզնես դասընթացներ կազմակերպելու և բիզնես ուղեկցում իրականացնելու առնվազն 2 տարվա փորձառություն, որն էլ հավաստվում է համապատասխան փաստաթղթերի (պայմանագիր, հանձման-ընդունման ակտ կամ արձանագրություն կամ այլ հավաստող փաստաթղթեր) առկայությամբ,»:

Ստորագրող
ԱՐՍԵՆ ԹՈՐՈՍՅԱՆ
3114820360

2026-08-05 17:39:38 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

ԱՐՍԵՆ ԹՈՐՈՍՅԱՆ